

ուարինութենէն ոգևորուած . — և ամեն ճաշէ ետքը վիճարանութիւն մը կը սկսի հարկաւոր եղած փոշոյն քանակութեան վրայ՝ զգալի համեմայ փորձազոյն աստիճանը՝ օշարակաց մեծագոյն զանգուածին աւելցընելու համար :

* *

Հիմա կարող գրքերուն եկաւ . — չեմ կարծեր որ ճանճը ուղենայ կատարելագործել մտաւորական կրթութիւնը, որ սկսած էր « կարծիր վերարկուն » ծածկով, — աւելի ստուգապէս կողից և աստուփն վրայքի մը փոշիմնացած պիտի ըլլայ, որ Լուուի ջնջոցէն և աչքէն կը փախի, և ճանճը կրնայ փափկանալ հօն : Առաջին կոյորը, որ կ'ընդունի իւր այցելութիւնը և թուի ամենէն համեղաճաշակը, կը վերաբերի կենսագրական գիտութեանց և կը կենայ անտուկիս լայն խոսիին վրայ :

* *

Հիմա ճանճը իրեն երկայն և թելակերպ գտտի ոսկրներով և ուղքներով և սրուակօք զինեալ վերևաքաքրելով կը թռչի — առանց սահելու պատահանին ապակիներուն վրայ, — և վերջը կը դառնայ կարճ և դիւրաբեկ եղիչըրներէ ձեացած զուխը անոնց վրայ զարնելու, ինչպէս թէ ուղենար դուրս ելլել : Բայց զուրսն այնպիսի ցուրտ մը կ'ընէ որ զինքը կրնայ մեռցընել, և ես

չեմ կրնար թողուլ իրեն որ այսպէս ելլէ, այսինքն առանց ուրիշ բանի մը զինքը կորսնցընել : Նոյն իսկ այս ձանձրանալի պատճառաւ որ դրադեցոյ իրեն թոշանաց ետեէն երթալով, ինքն ինծի ազնուագին բան մ'եղաւ և կրնայ ներկայացընել հոգեփոստական կենաց մէկ վայրկենին նիւթական յիշատակը, — և որովհետև ուրիշ կողմանէ ալ այսօրունէ առաջ չմտածեցի միջատաբանական տուփերու մէջ այսպիսի հասարակ երկրեանն միջատ մը գնել . — ցրտէն պաշտպանելու համար դիս սրունքներու փաթութեամբ ծածկոյթը կը քակեմ, ոտք կ'ելլեմ, կը թողում գրասեղանը, և զգուշութեամբ պատահանին կը մտնեմ, ձեռքս կ'երկնցընեմ ապակեաց վրայ և կը բռնեմ ճանճը, որ բողբոջով կը բզբզար : Գնդասեղ մը կուրծքին մէջ մտնելով կը խօցէ զինքը . — և ահա իրեն մերձաւոր ազգականաց երկթեանն միջատաց հաւաքման կարգին մէջ գետեղուած, որոնք են, Սրւացուցիչ ձանձ (Musca rumitaria), Ըստուր, կապոյտ փորով և սաստիկ ճերմակ գծերով, և կոչսր ձանձ (Musca Caesar) բոլորովին մեաղական կապոյտ խոշոր Գոռնիսներու (Tabani) ետեւ, որոնց կարճ զլուխներն ունին մեծամեծ աչքեր և վիրաւորելու համար կրնծիթներ, և մեղմուկներուն որ նոյնպէս երկթեանն են բայց մարմինն նուրբ է :

Ռոձիկ բանակաց . — Սրբատօրէ զօրաց տուեալ հաստատուն կերակուրն եւրոպիոյ Տէրութեանց մէջ յետագայ համեմատութեամբ է :

Գերմանիոյ մէջ խաղաղութեան ժամանակ 750 կրամ է, հանդերձ ազով . և 850 կրամ պատերազմի ժամանակ :

Աստրիոյ մէջ (բաց 'ի աղէն, գինււոյն և սուրճէն) 789 կր :

Պելճիոյ մէջ (բաց 'ի սուրճէն) 770 կր :

Գաղղիոյ մէջ (բաց 'ի գինւոյն քարեջրէն, կամ օղիէն) 661 կր . աղով հանգեւրծ :

Իտալիոյ մէջ (բաց 'ի սուրճէն, գինւոյն և աղէն) 637 կր :

Անգղիոյ մէջ (բաց 'ի սուրճէն, գինւոյն և թէյէն) 672 կր . աղով հանդերձ : Ռուսիոյ մէջ 1019 կր :

Սպանիոյ մէջ (բաց 'ի սուրճէն) 900 կր : Թուրքիոյ մէջ 698 կր . և 50 հարիւր բորդակրամ :

Չուիցերիի մէջ (բաց 'ի չորդաղէն և սուրճէն) 1062 կր :

Որով կը տեսնուի թէ լաւագոյն ոստիկ ունեցողն զուիցերացի զինուորն է, իսկ նուազագոյնն իտալացին :